ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 941

ԱՐՍԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԵՎ ԱՐՏՅՈՄ ԱՐՄԵՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Հենրիկ Իգիթխանյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 9-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Արսեն Վլադիմիրի Ավագյանի և Արտյոմ Արմենի Ավագյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Արսեն Վլադիմիրի Ավագյանի և Արտյոմ Արմենի Ավագյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Արսեն Վլադիմիրի Ավագյանին և Արտյոմ Արմենի Ավագյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 942

ՄԱՐՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Մարտուն Թորգոմի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 61 քառակուսի մետր մակերեսով բնակարանին տրամադրված «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թորոսյան փողոց թիվ 1 շենք, թիվ 3 բնակարան» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գրանցման թիվ N 15122014-06-0017 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 060068VZHEMF) և Մարտուն Թորգոմի Մելիքյանի (ծնված՝ 07.02.1960 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մարտուն Թորգոմի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 61 քառակուսի մետր մակերեսով բնակարանի առկա «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թորոսյան փողոց թիվ 1 շենք, թիվ 3 բնակարան» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ Շ. Թորոսյան փողոց 5/2 շենք, 3 բնակարան» հասցեով (փոստային դասիչը՝ 1804):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ.հոկտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 943

«ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 17-րդ կետով, 18-րդ կետի «գ» ենթակետով, հաշվի առնելով, որ «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Շիրակի խճուղի 144» հասցեում գտնվող, 06-006-0201-0002, 06-006-0201-0012 և 06-006-0201-0014 կադաստրային ծածկագրերով 19,2241, 4,985 և 0,015 հեկտար մակերեսներով հողամասերի վրա 2017 թվականին ինքնակամ կառուցված թռչնանոցների և ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 25052020-06-0048 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝

2023BW8GH8, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Վաչագանի Գևորգյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Շիրակի խճուղի 144» հասցեում գտնվող, 06-006-0201-0002, 06-006-0201-0012 և 06-006-0201-0014 կադաստրային ծածկագրերով 19,2241, 4,985 և 0,015 հեկտար մակերեսներով հողամասերի վրա ինքնակամ կառուցված 28,20 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 1696,60 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 28,20 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 1696,60 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 28,20 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 1696,60 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 28,20 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը, 1696,60 քառակուսի մետր մակերեսով թռչնանոցը և 41,60 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին՝

1) համայնքի բյուջե վճարել 13 491 300 ՀՀ դրամ (հաշվեհամար **900245161352**) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 944

ՀԱՅԿ ԱՆՏՈՆԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Հայկ Անտոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տրամադրված «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Ալ. Մանուկյան փողոց, Կ-1 5 շենք, 2 բնակարան» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23032017-06-0015 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006WPDUJYA) և Հայկ Անտոնի Սարդարյանի (ծնված՝ 26.03.1976թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայկ Անտոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի առկա «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Ալ. Մանուկյան փողոց, Կ-1 5 շենք, 2 բնակարան» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ա. Մանուկյան փողոց, 13 շենք, 2 բնակարան» հասցեով (փոստային դասիչը՝ 1804):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ.հոկտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 945

ԷԴԳԱՐ ԱՐԱՅԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի բնակիչ Էդգար Արայիկի Ստեփանյանը 2023 թվականի սեպտեմբերի 19-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով վերացնել Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 8-ի թիվ 699 որոշումը:

Էդգար Արայիկի Ստեփանյանը վարչական բողոքում նշել է, որ գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում իր կողմից համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ շենք կառուցելու հանգամանքը, վիճարկվող որոշմամբ չեն հիմնավորվել կառուցված շինությունը ինքնակամ հանդիսանալու, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված լինելու հանգամանքները, որպիսի պայմաններում չէր կարող ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով վարչական պատասխանատվության, չէր կարող ընդունվել շինությունը քանդելուն պարտավորեցնելու որոշում:

2023 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը 15:00-ին՝ վարչական բողոքի քննարկման ժամանակ, Էդգար Արայիկի Ստեփանյանը պնդեց իր վարչական բողոքը:

Վարչական բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ներքին գործոների նախարարության ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի պետի 2023 թվականի օգոստոսի 4-ի թիվ 59/5-2013 գրության հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքում Սպիտակ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Նարեկ Յուրիկի Սարգսյանի կողմից 2023

թվականի օգոստոսի 9-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, կառուցվող շինության լուսանկարներով, Հայաստանի Հանրապետության նախարարության ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի ՔՀԲ օպերլիազոր, ոստիկանության ավագ լեյտենանտ Ֆ. Ավետիսյանի կողմից 2023 թվականի օգոստոսի 3-ին կազմված տեղեկանքով հաստատվել է այն փաստը, որ Սպիտակ քաղաքի Շիրակի խճուղի թիվ 3 տնակ հասցեի բնակիչ Էդգար Արայիկի Ստեփանյանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով փոխանցված 06-006-0410-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր հողատեսքի հողամասի վրա ինքնակամ կառուցում է 9,7 քառակուսի մետր լայնությամբ, 22,8 քառակուսի մետր երկարությամբ շինություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Տվյալ պարագայում 06-006-0410-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր հողատեսքի հողամասը, որի վրա կառուցվել է շինությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին, հետևաբար այն հանդիսանում է համայնքային սեփականություն: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Էդգար Արայիկի Ստեփանյանին վերը նշված հողամասի նկատմամբ որևէ իրավունք, այդ թվում՝ շինարարության թույլտվություն չի տրամադրվել, հետևաբար այն հանդիսանում է ինքնակամ կառուցված շինություն:

Ինչ վերաբերում է վարչական բողոքում բերված այն պնդմանը, թե չէր կարող ընդունվել շինությունը քանդելուն պարտավորեցնելու որոշում, ապա անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից նման որոշում չի ընդունվել:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 18-ի թիվ 699 որոշման 2-րդ կետով սահմանված է.

«2. Կասեցնել ինքնակամ շինարարությունը և վերացնել դրա հետևանքները՝ քանդելով ինքնակամ կառուցվող կառույցը (շինությունը)»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ ***որոշում եմ.***

1. Էդգար Արայիկի Ստեփանյանի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի վարչական բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 18-ի «Էդգար Արայիկի Ստեփանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու, ինքնակամ շինարարությունը կասեցնելու և ինքնակամ կառուցվող կառույցը քանդելու մասին» թիվ 699 որոշումը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում հանձնել Էդգար Արայիկի Ստեփանյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Արայիկի Ստեփանյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 946

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԱՎԻԹ ԲԵՅԲՈՒԹԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով և 22.1-ին կետով, հաշվի առնելով, որ Դավիթ Բեյբութի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ քաղաքում գտնվող, 06-006-0498-0006 կադաստրային ծածկագրով 0,0566 հեկտար մակերեսով հողամասի վրա 1991 թվականին կառուցված բնակելի տան, մառանի, 2013 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Դավիթ Բեյբութի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0498-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրված «Սպիտակ Սպիտակ ք. Թորոսյան փողոց 8 ավտոտնակ» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28072022-06-0025 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023A99E4H, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006LGD2NPB), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Դավիթ Բեյբութի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Դավիթ Բեյբութի Պողոսյանին (ծնված՝ 03.01.1952 թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ քաղաքում գտնվող, 06-006-0498-0006 կադաստրային ծածկագրով 0,0566 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 79,90 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 99,10 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը 19,00 քառակուսի մետր մակերեսով մառանը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Դավիթ Բեյբութի Պողոսյանի սեփականության իրավունքը:

3. Դավիթ Բեյբութի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ քաղաքում գտնվող, 06-006-0498-0006 կադաստրային ծածկագրով 0,0566 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինությունների առկա «Սպիտակ Սպիտակ ք. Թորոսյան փողոց 8 ավտոտնակ» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Շ. Թորոսյան փողոց 28/5 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1802):

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագիծը:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և հասցեի փոփոխությունը ենթակա են պետական գրանցման:

6. Դավիթ Բեյբութի Պողոսյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 209 962 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 947

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0068-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,024081 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԳԱԼՈՒՍՏ ԱՐՏՈՒՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1 -ին կետով, 64-րդ հոդվածի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0068-0014 կադաստրային ծածկագրով 0,024081 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա գտնվող վարչական շենքի նկատմամբ թիվ 2/328 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 1999 թվականի դեկտեմբերի 20-ի վճռով ճանաչվել է Գալուստ Արտուշի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը, հիմք ընդունելով գործ նո 2/328 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 1999 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ–ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի հասցեավորման հայտը (քաղվածք՝ 06095PBHXEYN) և Գալուստ Արտուշի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և ճանաչել Գալուստ Արտուշի Հովհաննիսյանի (ծնված 10.10.1956թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0068-0014 կադաստրային ծածկագրով 0,024081 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Ջրաշեն, 8-րդ փողոց, 30/2 վարչական շենք» հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2023թ. № 948

06-049-0004-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,10000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԴԱՆ ՎՈՎԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Վարդան Վովայի Վարդանյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի չափը կազմում է 0,10000 հեկտար, որը Վարդան Վովայի Վարդանյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1994 թվականին կառուցված բնակելի տունը, անասնագոմը և ծածկը կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրության հաշվետվությունը, «Քաղաքաշինական Ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը,

Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06049WGEDHGT) և Վարդան Վովայի Վարդանյանի ներկայացուցիչ Քնարիկ Մկրտիչի Վարդանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վարդան Վովայի Վարդանյանի (ծնված՝ 02.01.1973թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող 06-049-0004-0006 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,10000 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի, դրա վրա գտնվող 91,4 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 80,7 քառակուսի մետր մակերեսով անասնագոմի և 2,3 քառակուսի մետր մակերեսով ծածկի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի ճշգրտված հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ, գյուղ Ծաղկաբեր, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի, 14 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ՝ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հոկտեմբերի 2023թ. № 949

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-0501-0054 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ 06-006-0501-0054 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրված «Սպիտակ ք. Թորոսյան փողոց, Կենտրոն-1 թաղամաս, 17» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1737992 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006YSEHWMZ) և «ԵՌԱՆԿՅՈՒՆԻ-333» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. 06-006-0501-0054 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի առկա «Սպիտակ ք. Թորոսյան փողոց, Կենտրոն-1 թաղամաս, 17» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Շ. Թորոսյան փողոց, 6/2 շենք» հասցեով (փոստային դասիչը՝ 1804):

2. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0501-0054 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հատակագիծը:

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հոկտեմբերի 2023թ. № 950

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 895 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 895 որոշման վերնագրում Սոնյա Գրիգորի Ղազարյանի ազգանունը սխալմամբ գրվել է «Եղիազարյան», որոշման նախաբանում և 2-րդ կետում Սոնյա Գրիգորի Ղազարյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Գարեգինի»՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 5-ի «Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 0,04 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Սոնյա Գրիգորի Եղիազարյանի սեփականության իրավունքը վերականգնելու, 0,009347 հեկտար մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու, հողամասի հատակագիծը հաստատելու և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 895 որոշման վերնագրում գրված «Եղիազարյան» բառը փոխարինել «Ղազարյան» բառով, որոշման նախաբանում և 2-րդ կետում գրված «Գարեգինի» բառը փոխարինել «Գրիգորի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 951

ԱՐՍԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՏՅՈՄ ԱՐՄԵՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հաշվի առնելով, որ Արսեն Վլադիմիրի Ավագյանը և Արտյոմ Արմենի Ավագյանը ինքնակամ զավթել են Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-083-0239-0027 կադաստրային ծածկագրով հողամասից 0,22920 հա մակերեսով հատված և չի վերացրել դրա հետևանքները, հողամասում 2014 թվականին ինքնակամ կառուցելով 195,2 քառակուսի մետր մակերեսով վարչական շենք, 65,7 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակ, 17,3 քառակուսի մետր մակերեսով հենապատ, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Հենրիկ Մարտինի Իգիթխանյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 9-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Արսեն Վլադիմիրի Ավագյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Արտյոմ Արմենի Ավագյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ հարյուր հազար ՀՀ դրամ:

3. Սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Արսեն Վլադիմիրի Ավագյանին և Արտյոմ Արմենի Ավագյանին:

4. Արսեն Վլադիմիրի Ավագյանին և Արտյոմ Արմենի Ավագյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Սպիտակ համայնքի **900245161063** գանձապետական հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Վլադիմիրի Ավագյանին և Արտյոմ Արմենի Ավագյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 952

ՍՊԱՐՏԱԿ ՍԱՆԴՐՈՅԻ ԱՓՈՒՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-021-0020-0046 ԵՎ 06-021-0020-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2797082 և 2797080 վկայականները, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06021MRW4FX5) և Սպարտակ Սանդրոյի Ափուջանյանի (ծնված՝ 11.11.1962թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Սպարտակ Սանդրոյի Ափուջանյանին սեփականության իրավունքով պատկանող «Սպիտակ գյուղ Արևաշող, 1-ին փողոց, 82/2» և «Սպիտակ գյուղ Արևաշող, 1-ին փողոց, 82/1» հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-021-0020-0046 և 06-021-0020-0047 կադաստրային ծածկագրերով 0,1019 հեկտար մակերեսով և 0,0491 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը:

2. Սույն որոշման 1-ին կետով միավորված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք գյուղ Արևաշող, 1-ին փողոց, 82 կիսակառույց» հասցեն:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 953

«ՓՈՔՐԻԿ ՔԱՅԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաներ Անգելինա Արմենի Բաբայանը, Սոֆյա Վլադիկի Գրիգորյանը «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված միջազգային երաժշտական մրցույթ-փառատոնի «Ակադեմիական վոկալ» անվանակարգում ճանաչվել են 2-րդ կարգի դափնեկիրներ, Նռանե Սարգսի Մարկոսյանը «Էստրադային երգ» անվանակարգում ճանաչվել է 2-րդ կարգի դափնեկիր, Միշա Արսենի Ղուկասյանը և Հովհաննես Կարենի Պողոսյանը «Ակադեմիական վոկալ» անվանակարգում ճանաչվել են 3-րդ կարգի դափնեկիրներ, հիմք ընդունելով օրինական ներկայացուցիչներ Ռուզաննա Ավետիքի Զաքարյանի, Թամարա Վալերիկի Աղամալյանի, Մարինե Սերժիկի Թադևոսյանի, Վարսենիկ Տարոնի Վարդանյանի, Արմենուհի Արամայիսի Բոյախչյանի դիմումները և «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպության կողմից տրված դիպլոմները՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հուշանվերներ և շնորհակալագրեր ձեռք բերելու համար հատկացնել 154 400 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ.հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 954

«ՀՐԱՉՅԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ ԼԵՌՆԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՀՐԱՉՅԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ ԼԵՌՆԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի հոկտեմբերի 16-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՀՐԱՉՅԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ ԼԵՌՆԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 87071911) տալ «ՀՀ Լոռու մարզ գ. Մեծ Պարնի 24փ. 27 ԱԳԼՃԿ» հասցեում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 955

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-052-0134-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,29000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի փետրվարի 14-ի վկայագիրը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Թամարա Վանիչկայի Բաղդասարյանի (ծնված՝ 05.04.1955թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող, 06-052-0134-0026 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի 0,29000 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 956

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-052-0139-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,41754 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի փետրվարի 14-ի վկայագիրը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Թամարա Վանիչկայի Բաղդասարյանի (ծնված՝ 05.04.1955թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող, 06-052-0139-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի 0,41754 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 957

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-052-0001-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,01600 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի փետրվարի 14-ի վկայագիրը, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06052Y5HCQS2), «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Թամարա Վանիչկայի Բաղդասարյանի (ծնված՝ 05.04.1955թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող, 06-052-0001-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,01600 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Կաթնաջուր, 15-րդ փողոց, 21 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1815):

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 958

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-006-0502-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գրանցման թիվ 29092023-06-0053 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060063SXKRNM) ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող 06-006-0502-0016 կադաստրային ծածկագրով բազմաբնակարան շենքի բնակարանին (համաձայն հատակագծի) տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Շ. Թորոսյան փողոց, 1 շենք, 3 բնակարան» հասցեն (փոստային դասիչը՝ 1804):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023թ. № 959

ԳԱԳԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 104-Ա որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2460915 վկայականը և Գագիկ Վաղինակի Շուշանյանի 2023 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Երկարաձգել Գագիկ Վաղինակի Շուշանյանին կառուցապատման իրավունքով տրամադրված 0,002 հեկտար մակերեսով հողամասի՝ 2008 թվականի նոյեմբերի 25-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի (գրանցված է սեղանամատյանում 6866-ով) ժամկետը 15 տարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 16
ք.Սպիտակ